

Տվյալ դեպքում, Դատարանն արձանագրում է, որ չնայած քննարկվող դեպքում Պայմանագիրը լուծելու ծանուցումը նշված օրը, վկայակոչված կայքում հրապարակված լինելու ծանուցումը հավաստող ապացույց առկա չէ, այնուամենայնիվ, բացառապես նշված պայմանի վկայակոչումն ինքնին հիմք չէ հայցը բավարարելու համար, քանի որ Հայցվորի կողմից Դատարանին որևէ կերպ չի հիմնավորվել, թե նշված գործընթացը պահպանված չլինելու արդյունքում իր ո՞ր իրավունքն է խախտվել կամ իր ո՞ր իրավունքի իրացումից է զրկվել:

Նշված դիրքորոշման հիմքում կարևորում է նաև այն, որ հիշատակված էլեկտրոնային նամակագրությունից պարզ է դառնում, որ Պայմանագիրը միակողմանի լուծելու ծանուցումը 16.12.2025թ. ուղարկվել է այն նույն էլեկտրոնային հասցեին, որը հայցադիմումում նշվել է, որպես հայցվոր ընկերության էլեկտրոնային հասցե, ինչից հետևում է, որ հայցվորը նշված կերպ ծանուցվել է հիշատակված գործընթացի մասին:

Վերոգրյալի լույսի ներքո Դատարանը գտնում է, որ հայցը ենթակա է մերժման, քանի որ քաղաքացիական գործի քննության ընթացքում որևէ կերպ չի հիմնավորվել, որ հիշատակված բացթողումը որևէ կերպ անդրադարձել է Հայցվորի իրավունքների և պարտականությունների իրացման վրա:

Արդյունքում Դատարանը գտնում է, որ հայցը ենթակա է մերժման:

Միաժամանակ, Դատարանն անդրադառնալով գործին մասնակցող անձանց միջև դատական ծախսերի բաշխման հարցին, գտնում է հետևյալը.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն:

Վերոգրյալի հիման վրա և նկատի ունենալով, որ հայցը ենթակա է մերժման, իսկ Հայցվորի կողմից նախապես վճարվել է անհրաժեշտ չափով պետական տուրքի գումարը, Դատարանը գտնում է, որ պետական տուրքի հարցը պետք է համարել լուծված:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 198-րդ հոդվածով, Դատարանը.

## **Վ Ճ Ո Ւ Յ**

«Ջ Ի Է Յ Գ Բ Ո Ի Պ» ՍՊԸ-ի հայցն ընդդեմ «Երևանի Չերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի՝ «Երևանի ՉԷԿ» ՓԲԸ-ի կողմից վերջինիս և «Ջ Ի Է Յ Գ Բ Ո Ի Պ» ՍՊԸ-ի միջև 26.11.2025թ. կնքված թիվ «ԵՉԷԿ-ԳՀԾՁԲ 25/59-1» ծածկագրով պայմանագրի միակողմանի լուծումն անվավեր

ճանաչելու պահանջի մասին, մերժել:

Դատական ծախսերի հարցը համարել լուծված:

Վճիռը կամովին չկատարելու դեպքում այն կկատարվի հարկադիր կատարումն ապահովող ծառայության միջոցով՝ պարտապանի հաշվին:

Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և կարող է բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ վճռի հրապարակման պահից մեկամսյա ժամկետում:

## ԴԱՏԱՎՈՐ՝

### Տ.ԳՐԻԳՈՐՅԱՆ



Սույն փաստաթղթի իսկությունը հնարավոր է ստուգել <https://verify.e-gov.am> կայքում մուտքագրելով 1E1E-867B-4681-8B8F հսկիչ համարը կամ սքանավորելով QR կոդը:

---

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "[Էլեկտրոնային դատավարություն](https://cabinet.armlex.am)" համակարգ՝ [cabinet.armlex.am](https://cabinet.armlex.am)